ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 4580-Ա « 17 » սեպտեմբերի 2026թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 29-Ի Հ.2766-Ա
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, հաշվի առնելով «ԱՐՄԵՆ ԴԱՎԹՅԱՆ ՌՈՒՍԼԱՆԻ» ԱՁ-ի կողմից 12.03.2022թ. կազմած հողամասի հատակագիծը, ինչպես նաև քաղաքացի Հայկ Խաչատրյանի 04.08.2026թ. հ.Դ-81905-26 դիմումը.

1. Երևանի քաղաքապետի 2026 թվականի մայիսի 29-ի «Երևան, Էրեբունի, Նոր-Արեշ 17-րդ փողոց հ.53 հասցեում՝ սեփականության իրավունքով Հայկ Գևորգի Խաչատրյանին պատկանող և Նոր-Արեշ 17-րդ փողոց հ.53/3 հասցեում՝ Երևան քաղաքի սեփականություն հանդիսացող հողամասերում գտնվող ինքնակամ իրականացված կառույցներն օրինականացնելու մասին» հ.2766-Ա որոշման 3-րդ և 4-րդ կետերում՝ «17.23քմ» բառերը փոխարինել «26.6քմ» բառերով:

2. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա:

3.Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ղեկավարի վրա:

4. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին, կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ